

«MyAmeria-ից DigiTec» գովազդային

վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակախաղ) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Ներքոգրյալ պայմանների կատարման պարագայում վիճակախաղի մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու iPhone 14 Pro Max 1TB սևարթֆոնի խաղարկությանը:
3. Վիճակախաղին կարող են մասնակցել Ամերիաբանկի ֆիզիկական անձ հաճախորդ հանդիսացող անձինք (այսուհետ՝ Հաճախորդ կամ Հաճախորդներ), ովքեր 2023 թ. մարտի 3-ից 2023 թ. մարտի 25-ը Երևանի ժամանակով 23:59-ը ներառյալ MyAmeria հավելվածով կկատարեն առնվազն 1 (մեկ) գործարք:
4. Վիճակախաղին մասնակցելու համար հաճախորդը պետք է 2023 թ. մարտի 10-ից 2023 թ. մարտի 12-ը ներառյալ Երևանի ժամանակով ժամը 10:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում այցելեն DigiTec Expo-ի (Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, Երևան, Հայաստան) Ամերիաբանկի տաղավար և իրենց անձնական տվյալները ներմուծեն Ամերիաբանկի կողմից տրամադրված համապատասխան համակարգում:
5. Վիճակախաղի պայմանը կատարելու դեպքում հաճախորդը Բանկում գրանցված իր էլ. փոստին, իսկ չունենալու դեպքում Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին կստանա Վիճակախաղի մասնակցության անհատական կոդ:
6. Վիճակախաղի մասնակցությունն անվճար է, բացառությամբ Հաճախորդի կողմից գործարքների կատարման համար ծախսված գումարի:
7. Հաճախորդի՝ Վիճակախաղին մասնակցելու իրավունքը ծագում է Վիճակախաղի պայմաններին համապատասխան անհատական կոդը/կոդերը Բանկում գրանցված Հաճախորդի էլեկտրոնային փոստի

հասցեին, իսկ չունենալու դեպքում Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին ստանալու պահից:

8. Վիճակախաղի արդյունքներով հաղթող կճանաչվի այն Հաճախորդը, որի անհատական կողմ պատահականության սկզբունքով կընտրվի վիճակահանության ընթացքում:
9. Վիճակահանությունը /Վիճակախաղի արդյունքների ամփոփումը/ կիրականացվի Ամերիաբանկի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով մինչև 2023 թ. ապրիլի 30-ը ներառյալ: Վիճակախաղի ուղիղ հեռարձակման օրվա և ժամի մասին բոլոր մասնակիցները կծանուցվեն Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի, իսկ չունենալու դեպքում Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի միջոցով:
10. Վիճակախաղի արդյունքում հաղթող ճանաչված համարը կիրառարակվի Ամերիաբանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում մինչև 2023 թ. ապրիլի 30-ի Երևանի ժամանակով ժամը 23:59:
11. Հաղթող հաճախորդին Բանկը կտեղեկացնի հաղթող ճանաչվելու մասին Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի և Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի միջոցով:
12. Հաղթող հաճախորդների հետ Բանկը լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով նվերի ստացման եղանակը և վայրը:
13. Նվերը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Բանկի կողմից նշված վայրը՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2

Հեռ.՝ 010 561111